

# ԿՐՕՆԱԿԱՆ-ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ա Ղ Օ Թ Ք \*)

## III

Հաւատքի և սրա հիտ կապուած կաղօթելու ընդունակութեան անյայտացումը մարդուն տանում է դէպի յօռետեսութիւն, դէպի գոյութիւն ունեցող ամբողջ իրերի անմիտ լինելու տխուր յուսահատութեան: Աշխարհի չարիքը այն ժամանակ զգացւում է էլ աւելի տանջալի, որովհետեւ ոչինչ չկայ այդ բանը բացատրող, չկայ ոչինչ, որ յոյս տայ նրա ոչնչացնելուն, որ հասկանալի կացուցանի նրա գոյութիւնը:

Այդ պատճառով շատերը անհաւատութեան շրջանից կրկին դառնում են դէպի կրօնը, շատերը, մանաւանդ որոնք ուշադրութեամբ են վերաբերւում դէպի կեանքը բայց արդարացում և իմաստ չեն գտնում նրա մէջ, ընդ միշտ մնում են հիասթափուած թերահաւատ և տխուր տանջուող և մռայլ հեզնանքով ասում են թէ՛ «ապրում են դատարկ և յիմար կեանքով»: Վերջապէս ուրիշները ապրելով այս անհաւատութեան շրջանը, առաջ են անցնում և ստեղծում են հաւատքի առանձին ձևեր, որոնցով և հասկանալի են համարում իրանց կեանքը:

Ուր չկայ հաւատք, այնտեղ չի կարող լինել աղօթքը: Կրօնը հաւատի արտորոշումն է (конкретизация) այսինքն նրա դիտողաբար գործադրութիւնը: Իսկ աղօթքը կրօնի գործնական արտայայտութիւնն է, նրա, այսպէս ասած, ամենօրեայ մարզանքը, որովհետեւ չկայ կրօն, որ աղօթքի որ և է ձևով չարտայայտուի:

Այսպէս է հաւատքի և աղօթքի փոխադարձ յարաբերութիւնը:

\*) Տես «Արարատ» № 2.

Հաւատ կորցնելը, հետեւաբար և աղօթելու ընդունակութիւն կորցնելը, ինչպէս մենք տեսանք, անհետեանք չի մնում՝ մարդու համար, այլ արտայայտում է որևէ բացօթի, որ երբեմն խիստ տանջողաբար է զգացնել տալիս իրան:

Իսկապէս ինչ է կորցնում մարդ աղօթքի հետ միասին. ահա այն հարցը, որը, մենք պէտք է որոշենք: Այս խորին մենք կմտենանք միայն հոգեբանական տեսակէտով, այսինքն կփորձենք պարզաբանել ի՞նչ է կորցնում մարդու հոգեկան կեանքը, երբ նրանից ընկնում են հոգեկան այն պրօցէստները, որոնց մենք աղօթքի բառով ենք արտայայտում: Սրա համար մենք պիտի նայենք աղօթքի վրա իբրև հոգեկան երևոյթի վրա, խուսափելով այն մասերից, որ ներմուծում են նրա մէջ զանազան կրօնները և դաւանութիւնները, և ինկատի կառնենք միայն ընդհանուրը, ինչ որ պարունակում է բոլոր աղօթաւորների աղօթքի մէջ:

Արդէն առաջին իսկ քայլերից երևում է պարզ, որ մեանգամից չի կարելի աղօթքին ընդհանուր մի որոշումն տալ, որովհետև նա արտայայտում է խիստ բազմազան ձևերով: Տարբերութիւն կայ նոր տան հիմնարկէքի, մեծի պահոց ապաշխարութեան և յարութեան առ Աստուած ուղղած ուրախական աղօթքների մէջ: Այդ պատճառով մենք աստիճանաբար կքննենք աղօթքի զանազան ձևերը, սկսելով նրա ամենահասարակ արտայայտութիւններից, արտաքին կողմերից և վերջացնելով աւելի բարդ ձևերով, աւելի խոր և ներքին կողմերով:

Աստուածապաշտութեան արտաքին ձևերը, տաճարների կազմութիւնը, սրբոց պատկերներն իրանց միջին, անչափ դէմքերով, մոմերի փայլփլոցը, աղօթքների արտաստութեան առանձին եղանակը, երգելը, կարգալը, սահմանուած շարժումներն ու զգեստաւորումները, այս ամենն ունին առանձին բնոյթ, ոչինչ բան ուշադրութիւնը չի ցրում, ամեն կողմ՝ լուծութիւն, չկայ պայծառ ներկ, չկայ շարժումն: Քահանան մի օրինակ յաճախ կրկնում է աղօթքի

միևնոյն բառերը, խուժըր միակերպ երգում է «Տեր ողորմիան», «Տուր մեզ Տէր», բոլորը միատեսակ խաչահանում են, խոնարհում են, գիշերային ժամերգութեան ժամանակ այս միօրինակութիւնը աւելի ևս զօրեղանում է ընդհանուր մթութեամբ։ Այս ընթերցանութեան արագութիւնից նոյնպէս ուշադրութիւնը թմրում է, մտքի աշխատանք չի զարթնում, միտքը գրաւող կապակցութիւններ չեն առաջ գալիս, բայց շարունակ, ինչպէս մուրճ գիտակցութիւնը սպողում է դէպի մի կողմ, հանդստացնում է նրան, գուրս վանելով բոլոր պայծառ յուզիչ երևոյթները, Հետեանքն այն է լինում, որ տղօթողների համար ստեղծում է առանձին դրութիւն, որ մօտենում էր հիպնոսացման թեթև դրութեան, չէ որ հիպնոսացումն էլ տեղի է ունենում լսողութեան, տեսողութեան և շոշափելեաց նեարդների միօրինակ թոյլ գրգիռով։ Անընդհատ լսելով ժամացոյցի միատեսակ տրկտկոցը կամ մի եղանակ ընթերցանութիւնը, հասարակ օրօրօցի երգը (կամ եկեղեցական ժամասացութիւնը), շարունակ գիտելով անշարժ փայլուն առարկաները կամ մօմերի հրացայտ լեզուները, մի խօսքով ենթարկուելով միօրինակ ամեն տեսակ թոյլ և համաչափ կրկնուող գրգիռի, մարդը ընկնում է անգիտակցական դրութեան մէջ, որ կոչւում է հիպնոս։ Այսպիսի գրքութեան ժամանակ մարդը ամեն տեսակ ներշնչման ընդունակ է դառնում, որ և է գաղափար, սովորաբար ուշադրութիւնը կարճ ժամանակով գրաւող՝ կարող է ամբողջովին դրաւել մարդուն և դարձնել նրան մանիակ, օրինակ.— Ասածու մասին մտածմունքը, յանցաւորութեան մասին և այլն։ Մի որ և է զգացմունք, որ սովորական ամենօրեայ կեանքում թեթև կերպով անցել է գիտակցութեան վրայից, այսպիսի պարագաներում դառնում է ուժ, աղօթքի էքստազի փոթորկալից յորձանք։ Մարդու անհատական կամքը այս դէպքում անցնում է յետին շարքերը, ետական, անձնական ցանկութիւնները, ձգտումները, շահերը տեղի են տալիս ուրիշ կամքի, որ գտնւում է արտաքոյ Եսի շրջանում, տեղի են տալիս ինչ ո՞ գերանձի։ Այսպէս ուրեմն ժամերգութեան ամբողջ

պարագաները խորը հոգեբանական իմաստ ունին — դրանք նախապատասխանում են հաւատացեալի գիտակցութիւնը կրօնական գաղափարների և տրամադրութիւնների կասարեալապէս իւրացնելու համար: Միաժամանակ և հասնում են հետևեալ նպատակին. յայտնի է, որ հիպնոսացած անհատները կորցնում են զգացողութեան ընդունակութիւնը, դադարում են ցաւ զգալ, անզգայանում և ընդարմանում են: — Եկեղեցական կարգուսարքը, որ աղօթողներին դնում է հիպնոսացման նման դրութեան մէջ, թեթևացնում է նրանց վիշտը, մոռացնել է տալիս տանջանքը և ազատում է նրանց մշտական վշտի, յոյզերի և անհանգստութեան բռնից:

Առանձին նշանակութիւն ունին և արտաքին ծէսերը, որոնք կապ ունին ժամասացութեան հետ. համեստ դիրքը, ծնրադրութիւնը, գլուխ խոնարհելը, երկրպագութիւնը, կաթօլիկների մօտ խաչամնան երեսի վրա ընկնելը, խաչ հանելը և այլն: Այս բոլորի իմաստը բացատրում է, երբ մենք գիտենք թէ ինչ տրամադրութեան սէջ է աղօթողը ժամերգութեան ժամանակ — դա հիպնոսացման մօտ դրութիւն է. իսկ եթէ հիպնոսացածին տանք այս կամ այն դիրքը, դրանով կարելի է համապատասխան տրամադրութիւն ներշնչել նրան: «Եթէ սեղմենք գիցուք այդպիսի անձի ձեռքը և բռունցք դարձնենք, ասում է Բիտներ, նրա մէջ առաջ կգայ զայրոյթի արտայայտութիւն համապատասխան շարժումներով, ուր դժուար չի լինիլ ճանաչել ըմբիշին երևակայական հակառակորդի հետ: Այդպէս էլ կարիլի է հիպնոսացածին ստիպել լողալ, մագլցել և այլն»: «Միացնելով ձեռքերը որպէս թէ աղօթելու համար, կարելի է նրա դէմքի շարժումների համապատասխան փոփոխութիւն առաջացնել. դէմքն ընդունում է լուրջ աստուածավախ արտայայտութիւն, անհատը ծունր է խոնարհում»:

Այսպէս ուրեմն, ժամասացութեան կարգուսարքը նախապատրաստում է մարդու հոգին կատարելապէս իւրացնելու աստուածային ներշնչումն, հեզ և խոնարհ դիրքը

արդէն ստեղծում է որոշ տրամադրութեան և Աստու-  
տառջ խոնարհուելու զգացմունք՝ աղօթելու ոգևորութիւն։  
Այս տրամադրութիւնն առաւել ևս զօրեղանում է հան-  
գիսաւոր աղաչական երգեցողութեանմբ, հոգևորականու-  
թեան փառաւոր շարժումներով, երգեհոնի լի մելամաղձոտ  
հնչիւններով (կաթողիկների մօտ), Այն ժամանակ աղօթողը  
զգում է, ինչպէս հոգու մէջ ներհոսում է ինչ որ վեհ,  
գեղեցիկ, մաքուր զգացմունք, ինչպէս փափկում է սիրտը,  
իսկ բոլոր մանր, ձանձրալի, անախորժ մտապատկերները  
գնում են հեռու հեռու։

Իսկ երբ աղօթքը լինում է ընդհանուր, երբ բոլորն  
սկսում են միասին երգել, համերաշխ ծունր են խոնար-  
հում, երբ ամբողջ եկեղեցին յանկարծ ընկնում է երեսի  
վրա, այն ժամանակ աղօթելու տրամադրութիւնը նոր ձև  
է ընդունում, անհատական կամքն արդէն թուլացել է,  
ընթացող աշխարհը պարզ չի պատկերանում, հոգին  
դառնում է դիւրազգած միմիայն արտաքին ներշնչման հա-  
մար, արտաքոյ անձնաւորութեան համար և այս գերանձ-  
նական զգացմունքը դառնում է ընդհանուր, կարծես թէ  
միաւորւում է ի մի հոգի, ի մի մարմին, որ ձգտում է  
դէպի Աստուած, Եւ ահա անդ ժամանակ կրօնական  
զգացմունքը հասնում է իր գագաթնակէտին, պաշարում  
է բոլոր աղօթողներին։ Ամբոխի հոգեբանութիւնը ցոյց է  
տալիս, թէ ինչպէս վարակիչ է զգացմունքը մասսայի մէջ,  
ինչպէս նա անցնում է մէկ մարդուց դէպի միւսը, միշտ  
աճում ու աճում է և դառնում ահագին տարերային ոյժ։  
Դժուար, համարեա անհնարին է ընդլիմադրել այս հօտային  
զգացմունքին, վախկոտներն այդ ժամանակ դառնում են  
հօրտաներ և ընդ հակառակը բաջերը կարողեն ենթարկուել  
ընդհանուր սարսափին։ Այսպիսի դէպքերում զգացմունք-  
ներն ու ձգտումները համարեա աննկատելի կամ թոյլ են  
լինում առանձին անհատների մէջ, բայց մեծ ծաւալ են ստա-  
նում ամբոխի մէջ, պատճառ են դառնում անմտութեանց,  
ոճրադորութեանց, ստեղծում են մասսայական հալիւ-  
սինասիօն, հրաշքներ և այլն։ Առանձնակի անհատը այդ ժա-

մանակ կորցնում է իւր անհատականութիւնը, սկսում է ապրել և զգալ բոլորի հետ միասին, ամբօխի հոգեբանութիւնը դուրս է վանում անհատի հոգեբանութիւնը։ Այդ պատճառով ուրախութիւնը, հրճուանքը, հմայքը (экстази) աւելի կատարեալ է լինում մարդկանց շրջանում, ընդհանուր հանդիսաւորութեան մէջ։ Դրա համար էլ եկեղեցին միջին դարերում էր այն վայրը, ուր կարելի էր ապրել բոլոր լաւը, գեղեցիկը, գաղափարականը կատարեալ չափով, ուր հաւատացեալները ուրախանում էին երկնային ուրախութեամբ, հրճուամէկին գերագոյն հոգեկան յոյզերով, ուր նրանք առատութեամբ ստանում էին պատասխան հոգեւոյ իրէպրակիան ձգտումների։

Ընդհակառակը, տանջանջանքը, վիշտը և տխրութիւնը զգացւում է եկեղեցում աւելի թոյլ, մենք ցոյց տալինք, որ կիսահիպնոսական դրութեան մէջ առհասարակ զգացողութիւնն սկսում է թուլանալ, ստացւում է որոշ աստիճանի անզգայութիւն և ընդարձացումն, սրա հետ միասին ամբողջ անձնականը անցնում է յետին շարքերը, ուտտի և եկեղեցում մարդուն տանջող և յուզող առիթները կորցնում են իրանց իսկական բնաւորութիւնը, մեզմանում և փոխարկում են աւելի վեհ խղճահարութեան, յանցանքի և չարի ընդհանուր լինելու գիտակրութեամբ, «ամենքի հետ մանհն էլ գեղեցիկ է» ասում է առածը։

Այսպէս ուրեմն միջին դարերում եկեղեցին էր ոչ միայն գերագոյն ուրախութիւնների շտեմարանը, այլ նոյնպէս և ընդհանուր պատասպարանը, ուր հանգստանում էին խղճի տանջանքը, արտի յուզմունքները, ուր դժբաղդ, տանջուած մարդկութիւնը սպեղանի էր գտնում իւր վէրքերի համար, ուր երկչոտ, կեանքից մտռացուած մարդը շարունակ ստանում էր մխիթաթարութիւն և յոյս։ Այդ պատճառով Պապի մի խօսքը «ինաերդիկտը» (եկ. ապաշխարանք) աւելի զօրեղ էր, քան կայսեր զօրագունդը, որովհետև նրա հպատակները կարող էին անել ամեն բան, բայց առանց եկեղեցու մնալ չէին կարող—գա կնշանակէր զրկուել ա-

մեն ինչից, ինչ որ տանելի էր դարձնում նրանց կեանքը, ինչ որ տալիս էր նրանց երկնային ուրախութիւն:

## IV

Համեմատած ծիսական աղօթքի հետ, ներկայանում է աւելի գերազայն ձև, 1. մեքենայական աղօթքը, 2. հանապաղօրեայ առաւօտեան և երեկոյեան աղօթքը և 3. մշտական աղօթքը, որ կատարում է վանքերում, նոյնպէս և ճգնաւորների, քուրձաղգեացիների աղօթքը:

Մեքենայական աղօթք ասելով հասկանում ենք այն սովորութիւնը, որ այս կամայն պատճառով անգիր արած և սովորած աղօթքի խօսքերը արտասանում են, ուշադրութիւն չդարձնելով նրանց իմաստի վրա: Առաջին հայեացքից այսպիսի աղօթքը թւում է անմտութիւն, կարծես հակառակ զգացմունքի: Սակայն հոգեկան դրութեան աւելի խորազննին վերլուծութեամբ այսպիսի մեքենայական ընթերցանութիւնը կերևայ որ ունի որոշ միտք և նշանակութիւն:

Եթէ շարունակ, որոշ ժամանակամիջոցի ընթացքում կրկնուին մի և նոյն սովորական բառերը, թէկուզ աղօթքը, այն ժամանակ ուշադրութիւնը առանց մեծ լարուածութեան մեր կողմից դառնում է այս ընթերցանութեան կամ կրկնութեան մի պրոցեսս, այս բառերի կրկնութեան հետ միասին յարուցանում են թէև հոգեկան շրջանում անգիտակցաբար, որոշ զգացողութիւն, ճիշտ է շատ թոյլ, բայց որովհետև աղօթքի մեքենայական ընթերցանութիւնը երկար է տևում, ուստի և այս թոյլ զգացողութիւնը մի տեսակ գումարւում է աւելի լայն և ուժեղ զգացողութիւն է դառնում, որը վերջ ի վերջոյ ընդգրկում է ամբողջ հոգեկան աշխարհը և ստեղծում նրա մէջ առանձին տրագրութիւն — աղօթքի ժամանակ — կրօնական. այս տրամագրութիւնը ազդում է մեր մտածմունքների ամբողջ հասանքի վրա և ուղղում է դէպի կրօնական կողմը, որովհետև աղօթքի խօսքերը և կրօնական տրամագրութիւնը արտաբերում են գաղափարների որոշ կապակցութիւն. այս

կապակցուած գաղափարները զուգնթաց են լինում համապատասխան զգացողութեամբ և հետեանքը լինում է խորը, հանգիստ, լայն ամբողջ գիտակցութիւնը ընդգկրող աղօթքի տրամադրութիւնս:

Միաժամանակ առաջ է գալիս և հակառակ գործողութիւն. նոր մէկէն առաջացած գաղափարներն ու զգացողութիւնները հետզհետէ տիրապետում են ամբողջ մեր ուշադրութեանը և աստիճանաբար դուրս են վանում կրօնական զգացմունքին անհամապատասխան և հակադիր զգացմունքները, գիտակցութիւնն, այսպէս ասած, գտւում, խաղաղում և ընդունակ է դառնում միայն իւրացնելու աղօթքի և զգացմունքների մտքերը: Ուշադրութիւնն էլ կենդրոնանում է որոշ ուղղութեամբ:

Ստացւում է մի տեսակ կիսահիպնոսական դրութիւն, որի մասին ասացինք քիչ առաջ. նոյնպիսի խաղաղ դրութիւն, ի հարկէ առանց կրօնական զգացմունքի, կարելի է ստեղծել սովորական մտքում համբերով, որպիսի միջոցի դիմում են անքնութեան առաջն առնելու համար: Այս գործառնութեան էութիւնը նրանում է կայանում, որ մենք կամովին մեր ուշադրութիւնը մի որոշ կողմ ենք դարձնում և դրանով գիտակցութեան միւս մտապատկերներից հեռացնում ենք. որովհետև երբ մեր ուշադրութիւնը ուղղուած է դէպի մտքերի մի որոշ շարք, երբ նրա շրջանում գտնւում են որոշ տեսակի զգացմունքներ, այդ նշանակում է, որիչ բնոյթ ունեցող հակառակ զգացմունքները թուլանում են և կամաց կամաց անհետանում: Պասկալը, Վեյլին, ինչպէս պատմում են, այդպիսի ընդունակութիւն ունէին իրանց ուշադրութիւնը հեռացնել ցաւից, զբաղուելով մի որևէ մտաւոր աշխատանքով: Դր կարպենտերը դասախօսութեան ժամանակ, երբ խորասուզւում էր մտքերի յաջորդական զարգացման մէջ, չէր զգում իրան տանջող ներգախտային ցաւը, իսկ դասախօսութիւնը վերջացնելուց յետոյ նա կրկին դառնում էր հիւանդ և տանջուող: Մի խօսքով այն մարդկանց մասին, որոնք շարունակ զբաղուած են որոշ մտաւոր աշխատանքով,

նրանց ընթացքի բոլոր տարօրինակութիւնները բացատրուում է նրանով, որ նրանց ուշադրութիւնը, առանց որևէ ճիգի, շարունակ ուղղուած է բացառապէս դէպի հոգեկան մի որևէ կողմ, իսկ մնացած բոլոր կողմնակի բաները աննկատերի են մնում նրանց գիտակցութեան համար, այնպէս որ նորա չեն լսում, չեն հասկանում ոչինչ, բացի այն, որով նորա այդ ըստէին զբաղուած են: Նոյնն է պատահում ամեն մի մարդու հետ, երբ նա մի որևէ բանի մասին խորը մտածման մէջ է կամ տարուած է որևէ զգացմունքով:

Վերը բերած օրինակներն ուշադրութիւնը ղեկավարելու զանազան եղանակներ են, գիտակցութիւնը կանոնաւորելու եւ կամովին ուշադրութիւնը մի կողմ դարձնելու ամենահասարակ միջոցն է մեքենական համրանքը եւ նոյնպէս մեքենական աղօթքը:

Ուշադրութիւնը կարելի է նմանեցնել էլէքտրական հեռալրջսին (պրոժեկտոր), որը սահելով գիտակցութեան վրայից լուսաւորում է նրա օրոշ մասը, ջոկում է նրան մնացած խաւար մասից և դրանով մեզ հնարաւորութիւն է տալիս առանց այս ու այն կողմ շեղուելու, մեր ամբողջ ուժը կենտրոնացնել լուսաւորուած մասի վրա և ուսումնասիրել այն մանրամասնաբար: Ով չի կարող ղեկավարել իր ուշադրութիւնը, նա միշտ ցրուած կլինի, անկարող կլինի մի բանի վրա երկար կանգ առնել և երբէք չի կարող մի բան խորը ուսումնասիրել:

Ընդհակառակը, նորա, որոնք տիրում են իրանց ուշադրութեան, բնական կրթութեամբ այս ընդունակութիւնը ձեռք բերած լինելով, նորա կարողանում են պայծառ և հեռու ճանապարհը տեսնել, որ տանում է դէպի իդիալը, նոցա առաջ բաց է լայն հորիզոն, ուր նորա կարող են ուսումնասիրել ամեն բան և զնալ ուղիղ գծով առանց ճանապարհից շեղուելու: Այդպիսի ուղեղները, առում է Ջեմսը, փարթամօրէն ծախկում են և հասնում են զարգացման բարձր աստիճանի: Իւրաքանչիւր քայլափոխում նորա նորանոր եզրակացութիւններ են հանում,

շարունակ հաստատուն դարձնելով իրանց ուշադրութիւնը...  
 նրանց գլխում լինում է բազմազան գազափարներ, բայց  
 և ժամերով նորա կարողանում են կենդրոնանալ միայն  
 մի գազափարի մէջ:

Այսպէս ուրեմն, մերենայական աղօթքը, սրպէս ամե-  
 նապարզ միջոց ուշադրութիւնը կառավարելու, պարզում  
 է աւելի այն էական և կարևոր հանգամանքով, ինչ դեր  
 որ մարդկային կողեկան կեանքի մէջ խաղում է ուշա-  
 դրութիւնը: Արովհետև այդպիսի աղօթքը կրօնական մար-  
 դիկ ամենայն օր ձիգ տարիների ընթացքում գործա-  
 դրում են, այդ պատճառով և դրանց հետևանքը շատ  
 ամծ պիտի լինի և աճի համեմատ գիտակցութեան շար-  
 տիճանին:

(շարունակելի)

